Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

333

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԴԱՐԵՒՈՐ ԿԱՂՆԻՆ

Թարգմ. ֆրանս. լէզուից

տ. Ն. Գարեան

օր. Ծ. Տէր-Նիկողայոսեանց

БАКИНСКАЯ ЦЕРКОВНО-ПРИХОДСКАЯ АРМЯНСКАЯ ШКОЛА

Մ

84Մ.
Դ-26

1907 (1)

Թիֆլիս, տպարան „Հերմէս", Ս. Գ. Նահիճարեանի, Մադաթեան փ. 5.

Իր ամուսնոյն տիկին Նունէ Քալանթարի յիշատակին նուէր
ՀԱՅՐԱՊԵՏ ՔԱԼԱՆԹԱՐԻՑ

30 MAY 2011

8ԿՍ
Դ-26

ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

ԴԱՐԵՒՈՐ ԿԱՂՆԻՆ

Բագուի Հայոց
Մեսրոպեան Դպրոց
Եկեղ.-ծխակ. (տղայոց)

1006
29077

Թարգմ. ֆրանսերէնից

Տ. Ն. Դաւրեան
օր. Ծ. Տէր-Նիկողայոսեանց

1907 թ.

1907 (1)
Թիֆլիս, տպարան „Հերմէս", Ս. Գ. Ծղիգարեանի, Մադաթեան փ. 5.

29.03.2013

Բագուի Հայոց Մեսրոպեան Դպրոց

ԴԱՐԵՒՈՐ ԿԱՂՆԻՆ

—Գիտէք, ի՞նչ կայ, շշնջում է առաւօտեան զեփիւռը մարգագետինների վրայով անցնելիս։

—Ի՞նչ կայ, ի՞նչ կայ, հարցնում են ծաղիկները գլուխ տալով։

—Դարեոր կաղնին մեռել է։

—Ի՞նչպէս թէ, դարեոր կաղնին մեռել է, այն կաղնին, որ այնչափ ուժեղ էր։

—Դուք սխալվում էք, սիրելի զեփիւռ, բացականչում է մարգարտածաղիկը, դեռ երեկ իմ բարեկամուհի արտոյտը նրա համար մի երգ էր երգում։

—Այո, նա հէնց այս գիշեր մեռաւ, փոթորիկը սպանեց նրան, ասաց զեփիւռը հեռանալով։

Երկու խայտիտ, որոնք խաղում էին մարգագետնի կողքին, լսեցին զեփիւռի երգը։

—Դարեոր կաղնին մեռել է, դա անկարելի բան է, բացականչեց տիկլին խայտիտը. եկ, սիրելիս, գնանք տեսնենք, ասաց նա իր ամուսնուն։

Եւ երկու թռչունները թևերի մի քանի թափահարումով հասան կաղնու մօտ։

Զեփիւռը չէր սխալուել։ Հսկայ կաղնին իսկապէս մեռել էր։ Նրա ահագին մարմինը ընկած էր կանաչ խոտի վրայ, արմատները դուրս էին եկել գետնից ու հաստ ճիւղերը կոտրտուած էին։

Երկու խայտիտները տխրութեամբ դիտում էին մեռած կաղնուն։

—Երևակայիր, սիրելիս, ասաց տիկին խայտիտը, կաղնու մահը որքան մեծ կորուստ է թէ մեզ, և թէ ամբողջ երկրի թռչունների համար։

—Այո, շատ տխուր բան է, սիրելի կինս, այսօրից վերջացան թռչունների ուրախ ծիծաղները և նրա շուրջը կատարուող թագստի խաղերը։ Խեղճ, ծերուկ կաղնի, դու այլևս չես կարող մեզ քո գրկում պատսպարել, երբ բազէն յարձակուելիս լինի մեզ վրայ։

—Ես այնքան սիրում էի կաղնուն, որ կարծում էի, թէ նա երբէք չի մեռնիլ, ասաց խայտիտը։

—Ես նոյնպէս, փոքրիկ կինս, նա այն աստիճան ուժեղ էր երևում, որ անկարելի էր կարծել, թէ նա երբևիցէ կմեռնի։ Որչափ կտխրեն մեր բոլոր բարեկամները, երբ լսեն կաղնու մահը։ Այժմ այլևս կաղնին չկայ։ Ո՞րտեղից կը գտնի մեր բարեկամ սկիւռը իր ձմեռուայ պաշարը, իսկ փայտոորիկները, ինչով կը կերակրուեն։ Նրանցից մէկը ինձ անցեալ օրը ասում էր, որ այս կաղնու պտուղը ամենից համեղն է ամբողջ երկրի մէջ։

—Ասա, սիրելի ամուսինս, ինչ ես կարծում, կը թողնեն, որ կաղնին այսպէս ընկած մնայ ամբողջ ամառը, հարցրեց տիկին խայտիտը։

—Ո՛չ, սիրելիս, չեմ կարծում, շուտով գիւղացիք կը գան և կաղնին կը տանեն։ Ես լսել եմ, որ կաղնու փայտը շատ օգտակար է։ Մի ծիծեռնակ ինձ պատմել է, որ մարդիկ կաղնու փայտից մեծ-մեծ տներ են շինում, որոնք սահում են ջրի վրայով։

—Խեղճ կաղնի, ասաց տիկին խայտիտը տխուր ձայնով, ես շատ և շատ կը ցանկայի իմանալ

կաղնու պատմութիւնը, իսկ դու, ամուսինս, չէիր կամենալ։

—Այո, ես նոյնպէս կը ցանկայի։

—Դէհ, ուրեմն գնանք շատախօս կաչաղակի մօտ, նա գուցէ կարողանայ մեզ պատմել կաղնու պատմութիւնը։

—Դու կարծում ես։

—Ի՛հարկէ, ի՛հարկէ, կաչաղակը ամեն բան գիտէ։

—Դէհ, ուրեմն գնանք։

* * *

Շատախօս պառաւ կաչաղակը պառկած էր իր բնի խորքում, որ գտնվում էր մի բարձր կաղամախու վրայ։ Կաչաղակը այնքան ծերացել էր, որ նրա աչքերը համարեա ոչինչ չէին տեսնում, իսկ գլուխը անդադար շառաչվում էր։ Նրա փետուրները անգամ նոսրացել էին։

—Բարև, փոքրիկներս, բարև, ասաց կաչաղակը խռպոտ ձայնով, երբ տեսաւ երկու խայտիտներին։

—Բարև, սանամայր, բարև, «երկրի բոլոր թռչունները կաչաղակին սանամայր էին կոչում»—ինչպէս էք զգում ձեզ այս առաւօտ։

—Հը՛մ, ինչպէս եմ զգում, լաւ չեմ երեխաներս, իմ աչքերս օրէցօր թուլանում են, բայց ասացէք խնդրեմ, ինչպէս է պատահել, որ այսօր եկել էք ինձ մօտ։

—Ապա՛, սանամայր, դուք չէք լսել, որ փոթորիկը արմատախիլ է արել մեր դարևոր կաղնուն։

—Ի՞նչ էք ասում, դարևոր կաղնին արմատախիլ է եղել, կրկնեց կաչաղակը ու կանգնեց մի ոտի վրայ, բայց, ո՛չ, դուք երևի հանաք էք անում։

—Հանաք չենք անում, իրաւ է, որ նա մեռել է, ասացին թռչունները միաբերան, և մենք ուզում

ենք ձեզնից իմանալ կաղնու պատմութիւնը, երևի դուք գիտէք։

—Կաղնու պատմութիւնը, իհարկէ ես գիտեմ, մայրս շատ ու շատ անգամ պատմել է ինձ կաղնու մասին։ Խեղճ կաղնի, դու էլ մեռար։ Ահա, մի բարեկամից էլ զրկուեցի։

Երկու խայտիտները նստեցին բնի կողքին, կաչաղակն էլ տեղը պնդացրեց ու ահա, հետևեալ պատմութիւնը արեց։

—

Մի անգամ, սրանից շատ ու շատ տարիներ առաջ—այս երկրի ծառերը քանի դեռ ծնուած էլ չէին—մէկ մեծ ծառից մի փոքրիկ օրօրոց ընկաւ։

Այդ օրօրոցի մէջ պառկած էր մի շատ փոքրիկ և թոյլ երեխայ։

Օրօրոցը մի կաղին էր, իսկ երեխան նրա միջի սաղմն էր։

Ինչպէս գիտէք, փոքրիկը շատ կը ցանկանար ապրել իր մօր մօտ, թաղնուած նրա տերևախիտ ճիւղերի մէջ։

Փոքրիկ օրօրոցը հէնց նոր էր ընկել գետին, և մանկիկը դեռ շշմած էր իր հետ պատահած փորձանքից, երբ մի սկիւռ յարձակուեց օրօրոցի վրայ և—փախցրեց։

Մանկիկը շատ վախեցաւ. նա իրան կորած էր համարում, երբ յանկարծ լսուեց հում, հում... ինչ էր սա։ Սա մի մեծ շուն էր, որ հաչելով գալիս էր։ Սկիւռը շատ վախեցաւ, բաց թողեց օրօրոցը և փախաւ դէպի անտառ։

Կաղինը մնաց ընկած մարգագետնի կողքին։ Շուտով նա ընկաւ խոր քնի մէջ և ամբողջ ձմեռը չորացած խոտերի և ձիւնի տակ մնաց։

Հետևեալ գարնան օրօրոցի միջի մանկիկը զարթնեց. նա շատ քաղցած էր, ուտել ցանկացաւ, բայց ոչ ոք նրան ուտելու բան չտուեց, մանկիկը մնացել էր մեն-մենակ, նրա մայրը մօտը չէր, որ նրա վրայ խնամք տանէր։

Մանկիկը սաստիկ տխրեց, նա ուզում էր լաց լինել, երբ յանկարծ լիշեց, որ իր բարի մայրը իր հետ երկու փոքրիկ ալիւրով լիքը բարձ էր դրել։ Խոնաւ գետնի տակ ալիւրը դարձել էր խմոր։ Մանկիկը կերաւ խմորից և տեսաւ, որ շատ համեղ է։ Նա շարունակեց ուտել և այնքան կերաւ, որ շուտով մեծացաւ և, իր օրօրոցը նեղ գտնելով, կամաց դուրս սողաց բարձերի մէջ տեղից և մտաւ հողի մէջ։

Այժմ նա սաստիկ գոհ էր իր վիճակից։

Նա իրանից արձակեց, ինչպէս բոլոր փոքրիկ բոյսերը, մի արմատ, մի գեղեցիկ փոքրիկ արմատ, որ ուղղաձիգ անցաւ հողի մէջ և սկսեց ծծել գետնի ջուրը և հիւթերը։

Փոքրիկ կաղնին այլևս չէր կերակրվում ալիւրի ապուրով. նա արդէն մեծացել է, ապուր ուտելը նա թողել էր փոքրիկներին։ Միայն նա ձանձրանում էր մենակութիւնից։ Ամբողջ օրը նա ախ էր քաշում։ «Ա՜խ, եթէ ես կարողանայի դուրս գալ գետնի տակից, մտածում էր նա։ Որչափ, երևի, գեղեցիկ է այնտեղ վերևում, գետնի երեսին։ Գուցէ այնտեղ կարողանայի բարեկամներ գտնել։ Բայց նա համբերող էր և քաջ, ինչպէս բոլոր կաղնիները։ Կամաց կամաց նա սկսեց գլխով հրել դէպի վեր, որ բարձրացնի իր բանտի կտուրը։

—

Փոքրիկ կաղնին արդէն դուրսն է։ Պէտք էր տեսնել, թէ նա ինչպէս գոռոզաբար օրօրում էր

աջ և ձախ իր գեղեցիկ ցօղունը և երկու կանաչ տերևները։

Ամենքը հիանում են նրա վրայ և սիրալիր խօսքեր են ասում։ Թիթեռը թռչում է նրա շուրջը։ Անուշահոտ մանուշակը նրան ողջունում է։ Մորեխը նրան բարի գալուստ է մաղթում։ Միայն մի խխունջ նրա մօտով անցնելիս քիթ է ցոյց տալիս, որից փոքրիկ ծառը վշտանում է։ Ա՛յ, դու, փոքրիկ անկիրթ։

Իրիկնադէմին մի թրթուր, որ սողում էր խոտերի միջով, հեռուից նկատեց կաղնու երկու գեղեցիկ տերևները։

—Ա՛յ, ես իմ ընթրիքս գտայ, ասաց նա մօտենալով, այս մատաղ ցօղունը շատ համեղ պիտի լինի... Նա շտապ-շտապ մագլցեց դողդողջուն ցօղունի վրայով և սկսեց կրծել տերևներից մէկի կողքը։ Փոքրիկ կաղնին վախեցաւ։ Նրա մայրը ասել էր, որ բոյսերը առանց տերևների չեն կարող շնչել։ Որքան նա կը ցանկանար նորից վերադառնալ գետնի տակ...

Թրթուրը շարունակում էր կրծել։ Մի քանի վայրկեան ևս և գեղեցիկ կանաչ տերևները անյետացած կը լինէին։

Բայց յանկարծ լսուեց թևերի մի թափահարումն և փոքրիկ կաղնին զգաց իր գլխին մի ուժեղ հարուած։ Նա շշմեց։ Երբ նորից ուշքի եկաւ, տեսաւ մի շիկահաւ, որ թրթուրը կոցին թռչում էր։

—Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, բացականչեց երախտապարտ կաղնին։

Ես լաւ պրծայ, ինքն իրան ասում էր փոքրիկ կաղնին, իմ սիրելի փունջս, իմ սիրելի փոքրիկ տերևներս, ինչ կը լինէր իմ ճարը առանց ձեզ։

***

Մի վայրկեան լռութիւնից յետոյ շատախօս կաչաղակը շարունակեց իր պատմութիւնը։

Երկար շատ երկար տարիներ անցան։ Փոքրիկ կաղնին դարձել էր մի գեղեցիկ ծառ ուժեղ բոյնով և թանձր սաղարթով։ Նա այլ ևս երեխայ չէր, այլ մի պատկառելի մայր շրջապատուած փոքրիկ կաղնիների մի բազմաթիւ ընտանիքով։

Մայր կաղնին խնամատար ժոր պէս տարածում էր իր մեծ թևերը երեխաների վրայ։ Փոքրիկ կաղնիները իրանց մօր շուրջը կազմում էին մի գեղեցիկ խիտ պրակ. թռչունները երկնքի չորս կողմից հաւաքվում էին այդտեղ և առաւօտից մինչև երեկոյ լցնում էին անտառը իրանց քաղցր երգերով։

—Սիրելի երեխաներս, ասաց մայր կաղնին մի գեղեցիկ մայիսեան օր փոքրիկ ծառերին, ես ձեզ մի նորութիւն պիտի ասեմ, եթէ դուք շարունակէք այդպէս լաւ ախորժակով ուտել, ինչպէս այժմ ուտում էք, կը ծածկուէք շուտով փոքրիկ կաղիններով և դուք էլ կունենաք երեխաներ, իսկ ես, գիտէք, տատ կը դառնամ, ասաց նա ծիծաղելով։

Այդ ամբողջ օրը փոքրիկ կաղնիները ուրախութեան մէջ էին և դեռ գիշերը շատ ուշ միմեանց հետ զրոյց էին անում և իրանց գլուխները շարժում, որով վախեցնում էին իրանց ճղների միջի քնած թռչնակներին։

Բայց այս աշխարհի ուրախութիւնները ամենքի համար էլ մշտատև չեն։

Հետևեալ առաւօտ արշալոյսին անտառ եկան փայտահատները։

Կիսաքուն թռչունները շտապ շտապ թողեցին իրանց փափուկ բոյները։ Մի սկիւռի ընտանիք փախաւ լաց լինելով, իսկ երիտասարդ կաղնիները սկսեցին դողդողալ։

Դրընգ, դրընգ, լսվում էր ծանր կացինների

ձայնը, որ մտնում էին ծառերի բների մէջ։ Սա ինչ տխուր օր էր։ Գիշերը երբ որ եկաւ, փոքրիկ կաղնիները պառկած էին գետնի վրայ, փշոտ ժորենիների միջին։ Նրանք մեռած էին և մայր կաղնին լալիս էր։

Շուտով գունատ լուսինը երևաց սարերի վերևը և սգաւոր կաղնին ասաց նրան։

—Գեղեցիկ լուսին, բարեկամուհիս, ասա, գիտես արդեօք թէ ինչու սպանեցին իմ երեխաներիս։

Բայց մի ամպ ծածկեց լուսինը և մայր կաղնին մնաց մեն-մենակ գիշերուայ մթութեան մէջ։

Ահա, հազարաւոր փոքրիկ լապտերներ սկսեցին փայլել երկնքում և մայր կաղնին դիմեց նրանց.

—Փոքրիկ աստղեր, փայլուն աստղեր, ասացէք, ինչու մարդիկ կոտորեցին իմ երեխաներին։

Բայց աստղերը լուռ էին և երբ արշալոյսը բացուեց, կաղնին դեռ լալիս էր։

Նա վշտից հիւանդացաւ և նրա բարեկամ անտառի թռչունները չկարողացան նրան մխիթարել։

Դեռ աշունը չեկած, նրա տերևները դեղնեցին և սկսեցին թափուել, հաստ բունը ծակուեց և ամբողջ շրջակայքում խօսում էին կաղնու մասին, որ վշտից կամաց կամաց մեռնում էր։

Մի օր, երբ խեղճ մայրը հարիւրերորդ անգամ հարցնում էր ինքն իրան, թէ ինչու արդեօք զրկեցին իրան իր երեխաներից, մէկ ծեր սարեակ ասաց. որովհետև կաղնու փայտը շատ օգտակար է մարդկանց համար, այդ պատճառով էլ մարդիկ քո երեխաներին կոտորեցին։ Կաղնու փայտից նրանք կահ կարասի, զանազան իրեր են շինում, կեղևը գործ են ածում կօշիկների համար կաշի պատրաստելիս, կաղնու փայտը գործ են ածում և իբրև վառելափայտ և

շատ ուրիշ բաների համար կաղնին օգտակար է, իսկ մենք բոլորս ստեղծուած ենք օգտակար լինելու համար։

Այս միտքը մի փոքր սփոփեց մայր կաղնուն և հետևեալ գարնան նրա տրամադրութիւնը լաւացաւ և երբ աշունը եկաւ նրա ճղները ծանրաբեռնուած էին սիրուն փայլուն կաղիններով։

* * *

—Ներեցէք, սանամայր, եթէ ձեզ ընդհատեմ, բացականչեց յանկարծ տիկին խայտիտը, կարող էք արդեօք ինձ ասել, թէ այն ինչ կարմրագոյն գնդակներ են, որ լինում են կաղնու տերևների վրայ։ Անցեալ ամառ իմ ամուսնու բացակայութեան միջոցին, ես գնացել էի իմ բարեկամուհի սևագլուխ երաշտահաւին այցելութեան։ Մենք աչքակապուկ էինք խաղում կաղնու ճիւղերի միջին, երբ յանկարծ նկատեցի այդ գնդակներից մէկը, որ հիանալի կարմիր գոյն ունէր... Կարծեցի կեռաս է և երբ կոցահարեցի, տեսայ շատ և շատ դառն է, լեզուս սկսեց այրուել և ինձ թուաց, թէ թունաւորուել եմ։

—Ինչպէս տեսնում եմ, դու քաղցրասէր ես, ասաց ծեր կաչաղակը գլուխը շարժելով։ Աւելի կասեմ անխելք, քան քաղցրասէր։ Դէհ, մի լաւ մտածիր, կաղնու վրա կեռաս կը լինի։ Կաղնու տերևների վրայ գտնուած կարմիր գնտակիկները բոյներ են։

—Ո՛չ, սանամայր, այդ անկարելի բան է, որ բոյն լինի։

—Այո, սիրունիկս, այո, բոյն է, նրա մէջ գրտնվում է մի փոքրիկ միջատ։ Ինչո՞ւ ես այդպէս զարմացած նայում, եթէ դու նեղութիւն կրէիր և այդ գնդակը ծակէիր կտցով, նրա մէջ մի որդ կը տեսնէիր։

—Մի՞թէ, սանամայր, ճիշտ նրա մէջ որդ կայ, ով գիտէ, այն լաւ, գէր որդերից, որ ես այնքան

սիրուս եմ, ա՜խ, եթէ իմանայի, բացականչեց տիկին խայտիտը։

Մի ուրիշ անգամ, շարունակեց կաչաղակը, ես ձեզ կասեմ, թէ ինչի են պէտք գալիս այն գնտակները, որ կոչվում են... չեմ կարողանում մտաբերել անունը, յիշողութիւնս իրաւ որ բոլորովին թուլացել է։

—Սրս, մէկը գալիս է, ասացին կամաց խայտիտները, ժռտենալով կաչաղակին։

Իսկապէս ճանապարհով մի մարդ էր անցնում. դա մի ծերունի էր, մէջքը բոլորովին կռացած և կամաց կամաց գալիս էր քթոցը շալակին։

—Ա՜հ, դա մեր ծերունի Յակոբն է, ասաց կաչաղակը, որ իսկոյն ճանաչեց նրա քայլուացքից։ Դուք դեռ նրան չէք ճանաչում, իհարկէ դեռ շատ ջահիլ էք։ Յակոբը դարևոր կաղնու հին բարեկամներից մէկն էր։

Երբոր դեռ փոքր էր. այս բարի Յակոբը, նա ամեն օր գալիս էր կաղնու տակ խաղալու։ Մի անգամ նրա հետ մի փորձանք պատահեց։ Սա մի շատ հին պատմութիւն է, չարժէ, որ պատմեմ։

—Հոգ չէ, սանամայր, պատմեցէք, խնդրեմ, պատմեցէք, մենք շատ սիրում ենք պատմութիւններ լսել։

—Շատ գեղեցիկ, ուրեմն պատմեմ.

Մի անգամ փոքրիկ Յակոբը ելաւ կաղնու վրայ, բարձրացաւ մինչև գագաթը և նստեց մի ճիւղի վրայ ու սկսեց ձի քշել։ Նա նստած էր քաջի պէս և գոռում էր յառաջ, իմ ձի, յառաջ, երբ յանկարծ ճիւղը թըրխկ կոտրուեց և փոքրիկ տղան գետին գլորուեց։

Բոլոր թռչունները տխրութեամբ նայում էին նրա վրայ, որովհետև ամենքն էլ սիրում էին Յակոբին։ Նա շատ լաւ տղայ էր, ձմեռը թռչունների

հաժար հացի փշրանք էր բերում և երբէք նրանց բոյններին ձեռք չէր տալիս։

Փոքրիկ Յակոբը վերկացաւ և կաղի տալով կամաց կամաց տուն վերադարձաւ։

Հետևեալ օրը Յակոբը չեկաւ կաղնու տակ խաղալու։ Թռչունները սաստիկ տխրում էին առանց Յակոբին։

Մի շաբաթ, մի երկար շաբաթ անցաւ, բայց Յակոբը անտառ չեկաւ։ Գիշերները թռչնակները յանկարծ զարթնում էին իրանց մամուռի օրօրոցներում և գլուխները թևերի տակից հանելով՝ քաղցր ձայնով ասում էին. ծիւ, ծիւ, ծիւ, որ նշանակում էր, մայրիկ, մէկը լաց է լինում, գուցէ դա Յակոբն է, իսկ մայրը պատասխանում էր ծիւ, ծիւ, ծիւ, հանգիստ եղէք, երեխայք, դա քամին է շվշվում։

Վերջապէս հետևեալ կիւրակին, երբ եկեղեցու զանգերը վերջացրին իրանց ուրախ զողանջիւնը, փոքրիկ Յակոբը երևաց, բայց բոլորովին գունատ էր և թոյլ և հազիւ էր կարողանում քայլել։

Նա սաստիկ հիւանդացել էր, բայց շնորհիւ իր մօր լաւ խնամքին, շուտով առողջացաւ և երեսի գոյնն էլ տեղը եկաւ։

Անտառի թռչունները հէնց որ Յակոբին տեսան, այսպէս երգեցին.

Ծիւ, ծիւ, ծիւ, մեր սիրտը ուրախ է,
Ծիւ, ծիւ, ծիւ, Յակոբիկը առողջ է։

Կաչաղակը մի փոքր կանգ առաւ։ Տիկին խայտիտը կտուցով կարդի բերեց իր կրծքի մի քանի փետուրները, որոնք ցիր ու ցան էին եղել, իսկ նրա ամուսինը մի կաթիլ արտասուք վայր գցեց, նայելով հայր Յակոբի վրա, որ անյայտանում էր ճանապարհի վերջում։

Ինձ մնում է միայն մի քանի խօսք ասել ձեզ մեր կաղնու վերջին օրերի մասին, շարունակեց կաչաղակը։

Անցան անթիւ տարիներ։ Կաղնին շատ և շատ յոգնել էր։ Նա տարիքով ամենից մեծ ծառն էր այդ ամբողջ շրջանում։ Մեծ մայրս, որ մի շատ բանիմաց կաչաղակ էր, կարծում էր, որ կաղնին տեսել է երեք հարիւր ձմեռ, իսկ ես չեմ կարողանում երեւակայել այդքան տարիներ, գլուխս չափազանց թոյլ է։

Մի խօսքով կաղնին շատ և շատ մեծ էր և նա մենակութիւնից ձանձրանում էր, որովհետև նրա մանկութեան ընկերները ամենքն էլ արդէն մեռած էին։

Մի դիպուածով նա ծանօթացաւ մէկի հետ, որ հաւատարիմ ընկեր մնաց մինչև նրա կեանքի վերջը։

Նոյեմբեր ամիսը հասել էր իր մռայլ երկնքով և ցուրտ օրերով։ Կաղնին պէտք է մտնէր իր ձմեռային երկարատև քնի մէջ, երբ մի օր մի ուժեղ ձայն ցնցեց նրան ոտից մինչև գլուխ։—Թրախկ, թրախկ. Սա որսորդի հրացանի ձայնն էր։ Նա մօտենում էր իր շան հետ միասին։

Նոյն րոպէին լսուեց մի թոյլ դողդողջիւն ձայն։ Դա մի կտցահար էր, որ սաստիկ վախեցել էր հրացանի ձայնից։

—Ես կորած եմ, ես կորած եմ, ուր գնամ, ուր թաղնուեմ, լալիս էր կտցահարը։

Կաղնին խղճաց նրա վրայ և ասաց.

—Կտցահար բարեկամ, շուտով մտիր, իմ երկու մեծ ճիւղերի մէջ եղած խոռոչի մէջ և թաղնուիր չար որսորդից։

Կտցահարը չթողեց, որ կաղնին խօսքը կրկնի և իսկոյն բարձրացաւ ծառը այնպէս, ինչպէս բարձրանում են կտցահարները ծառի չորս կողմը ոլոր-

մոլոր պատյտներ անելով և թաղնուեց խոռոչի մէջ։

Որսորդը և շունը անցան և թռչունը այլևս վախենալու բան չունէր։

Կաղնին իմ կեանքը փրկեց, մտածեց նա, ինչով կարող եմ նրան երախտապարտ լինել։

Նա գնաց քննելու ծառը և տեսաւ, որ միջատները և որդերը ամբողջապէս կրծել են նրա բունը։ Ապա նա սկսեց իր աշխատանքը։

Առաւօտից մինչև երեկոյ լսվում էր նրա կոցի ձայնը, որով խփում էր ծառի կեղևին և տակից դուրս հանում միջատների մի ամբողջ բանակ։ Միջատները աշխատում էին փախչել, բայց թռչունի լեզուն բռնում էր նրանց ճանապարհին և անուշ անում։

Ձմեռը եկաւ և Աստուած, որ մտածում է իր բոլոր արարածների մասին, ձգեց կաղնու ուսերի վրայ մի հաստ սպիտակ սաւան։

Կոցահարը այլևս չթողեց իր բարեկամ կաղնուն։ Դեռ անցեալ օրը ես նրան տեսայ իր թագաստոցում, պառաւած, դողդողջիւն և փետուրները թափթփած։ Նա համարեա չէր դուրս գալիս այնտեղից և կաղնու հետ շարունակ խօսում էր անցած երջանիկ օրերի մասին։

—

Կաչաղակը կանգ առաւ։

Երեք թռչունները մնացին լուռ։ Նրանք մտածում էին դարևոր կաղնու մասին, որ այնտեղ կանաչ խոտերի մէջ քնել էր իր յաւիտենական քունը։ Նոյնպէս մտածում էին նրա հաւատարիմ ընկերոջ-ծերունի կոցահարի մասին։

—Սանտամայր, զոչեցին յանկարծ խայտիտները, փոթորիկը գուցէ նրանց երկուսին միասին է սպանել։

—Հաւանական է, պատասխանեց կաչաղակը։

Վ Ե Ր Ջ։

«Ազգային գրադարան»
NL0383349

1747/1